



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«01» *հունվարի* 2021թ.

N 42-Ա

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԵՎ  
ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ,  
ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՄԵՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասով, 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 32-րդ հոդվածի 7-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 7-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 16-րդ և 34-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորող հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 20-ի N 10 որոշումը

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 7 իրավաբանական անձանց շինարարության իրականացման լիցենզիա և թվով 8 ներդիր, 2 իրավաբանական անձանց շինարարության որակի տեխնիկական հսկողության լիցենզիա և թվով 2 ներդիր, 2 իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման լիցենզիա և թվով 4 ներդիր (համաձայն հավելված 1-ի):

2. Տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 3 իրավաբանական անձանց շինարարության իրականացման թվով 3 ներդիր, 1 քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության թվով 3 ներդիր (համաձայն հավելված 2-ի):

3. Փոփոխել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 1 իրավաբանական անձի քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման թվով 4 ներդիր (համաձայն հավելված 3-ի):

4. Դադարեցնել ուժը կորցրած ճանաչելու միջոցով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված 3 իրավաբանական անձանց շինարարության իրականացման թվով 2 լիցենզիայի և 4 ներդիրի, 2 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման թվով 2 լիցենզիայի և 2 ներդիրի, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության թվով 2 լիցենզիայի և 3 ներդիրի գործողությունը (համաձայն հավելված 4-ի):

5. Վերաձևակերպել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման լիցենզիան և թվով 1 ներդիրը (համաձայն հավելված 5-ի):

6. Մերժել 16 իրավաբանական անձանց շինարարության իրականացման, 2 իրավաբանական անձի շինարարության որակի տեխնիկական հսկողության, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության համար ներկայացված լիցենզիայի և ներդիրի տրամադրման հայտերը (համաձայն հավելված 6-ի):

7. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

- «Պետական տուրքի մասին» օրենքի համաձայն լիցենզիան հանձնել լիցենզավորված անձանց՝ համապատասխան տարեկան պետական տուրքի վճարման դեպքում:

- Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

5/31/2021

X 

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ